Տասանորդ և ծոմի ավիրատվություն

«Բոլոր տասանորդը տարեք գանձատունը . . . և ինձ մէկ փորձեցեք սորանով, ասում է Զորաց Տէրը, թէ արդեօք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափել ձեզ համար՝ մինչև որ նորա համար տեղ չլինի»

Մաղաքիա Գ.10:

Ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ և ցանկանում է օրհնել ձեզ ձեր կյանքի բոլոր ասպարեզներում: Այն պատվիրանները, որոնք Նա տվել է Իր մարգարեների միջոցով, կօգնեն ձեզ երջանիկ կյանքով ապրել: Տասանորդ վճարելու պատվիրանը, որը վերականգնվել է Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով, ձեզ հնարավորություն է տալիս մասնակցելու երկրի վրա Աստծո արքայությունը կառուցելու գործին: Այս պատվիրանին հնազանդվելը՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մկրտվելու պահանջներից մեկն է:

Մեծ օրհնություններ են խոստացված նրանց, ովքեր հնազանդվում են տասանորդ վճարելու պատվիրանին:

Ի՞նչ է տասանորդը:

Տասանորդը եկամտի մեկ տասներորդ մասի նվիրաբերումն է Աստծո Եկեղեցուն: Այս պատվիրանը հայտնի է դեռ Հին Կտակարանի ժամանակներից: Մաղաքիա մարգարեն սովորեցրել է տասանորդի կարևորության և այն օրհնությունների մասին, որոնք գալիս են այս օրենքին հնազանդվելուց:

«Բոլոր տասանորդը տարեք գանձատունը . . . և ինձ մէկ փորձեցեք սորանով, ասում է Զորաց Տերը, թէ արդյոք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափել ձեզ համար՝ մինչև որ նորա համար տեղ չլինի» (Մաղաքիա Գ.10):

1838թ. Տերը կրկնեց այս պատվիրանը Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով.

«Իմ ժողովուրդը … [նրանք] պետք է վճարեն իրենց տարեկան ամբողջ եկամտի մեկ տասներորդը. և սա մնայուն օրենք պիտի լինի նրանց համար հավիտյան» (Վարդապետություն և Ուխտեր 119.3–4)։

Ձեր տասանորդները սուրբ են Տիրոջ համար, և տասանորդ վճարելով դուք պատվում եք Նրան։ Տասանորդ վճարելով դուք ցույց եք տալիս ձեր հավատքը Աստծո և Նրա աշխատանքի հանդեպ։

Ինչո՞ւ պետք է ես տասանորդ վճարեմ։

Ձեր կյանքում ցանկացած լավ բան պարգև է ձեզ սիրող Երկնային Հոր կողմից։ Երբ դուք ձեր հերթին նվիրաբերում եք 10 տոկոսը Նրան, դրանով դուք արտահայտում եք ձեր սերը, հավատքն ու երախտագիտությունը։ Դուք ցույց եք տալիս Աստծուն, որ կհետևեք Նրան, նույնիսկ եթե դա դժվար լինի։ Դուք ցույց եք տալիս Նրան, որ կապավինեք Նրան, ոչ թե կվստահեք փողին կամ նյութական բաներին։ Ձեր հավատարմության շնորհիվ, ձեր Երկնային Հայրը խոստանում է ձեզ օրհնություններ, որոնք շատ ավելի մեծ են, քան այն ամենը, ինչից դուք հրաժարվել եք։

Թեև որոշ մարդիկ դժվարանում են հավատալ, որ իրենք ի վիճակի են նվիրաբերել իրենց եկամտի մեկ տասներորդը, բայց հավատարիմ տասանորդ վճարողները գիտեն, որ չեն կարող չվճարել

տասանորդը: Մի շատ իրական ու հրաշալի ձևով երկնքի պատուհանները բացվում են և օրհնություններ են թափվում նրանց վրա: Մի այրի կին այսպես է բացատրել իր որդուն. «Ես չեմ կարող [մեծացնել ձեզ, երեխաներ] առանց Տիրոջ օրհնությունների, և ես ձեռք եմ բերում այդ օրհնություններն ազնվորեն տասանորդ վճարելով: Երբ վճարում եմ իմ տասանորդը, ես ունենում եմ Տիրոջ խոստումը, որ Նա կօրհնի մեզ, և մենք կունենանք այդ օրհնությունները, եթե այդպես շարունակենք» (Դալլին Հ. Օուքս, *Ensign*, May 1994, 33):

Տասանորդ վճարելը ցույց է տալիս ձեր հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Ապավինելով Նրան, դուք կստանաք ուժ, առաջնորդություն և աջակցություն, որոնց կարիքն ունեք կյանքում:

Հոգևոր ուժը գալիս է Տիրոջն ապավինելուց: Եթե լուրջ փորձություններ ենք ունենում կյանքում, մեզ հարկավոր է ավելի հզոր հավատ, ոգեշնչում և քաջություն: Այս օրհնությունները կարող են թափվել երկնքի պատուհաններից որպես տասանորդի օրենքին հնազանդվելու արդյունք:

Դեռ ավելին, շատ մարդիկ ստանում են այդ ամենը, որովհետև նրանք տասանորդի հավատարիմ վճարողներ են, նրանք ավելի լավ են կարողանում տնօրինել իրենց ֆինանսները և հոգալ սեփական կարիքները: Տասանորդ վճարելը սովորեցնում է մեզ վերահսկել մեր ցանկությունները նյութականի

հանդեպ և ազնիվ լինել մեր ընկերների հանդեպ։ Տիրոջ օրհնությունների և մեր սեփական ջանասիրության միջոցով մենք սովորում ենք, որ այն, ինչ մեզ տրվում է, բավարար է մեր կարիքների համար։

Անկախ ձեր եկամտի չափերից, դուք կօրհնվեք, եթե վճարում եք տասանորդը։ Երբ Հիսուսը տեսավ մի կնոջ, որը երկու լումա գցեց եկեղեցու գանձանակը, Նա ասաց Իր աշակերտներին. «Այս աղքատ որբևայրին գանձանակը գցողների ամենից ավելի գցեց։ Որովհետև ամենքն իրանց ավելորդիցը գցեցին. բայց սա... ամեն ինչ որ ուներ գցեց» (Մարկոս ԺԲ.43–44)։

Ինչպե՞ս են օգտագործվում տասանորդի ֆոնդերը:

Տասանորդը Տիրոջ ֆինանսական օրենքն է Իր Եկեղեցու համար: Տասանորդի նվիրատվությունները միշտ օգտագործվում են Տիրոջ նպատակների համար, որոնք Նա հայտնի է դարձնում Իր ծառաների խորհրդի միջոցով: Օգտագործման որոշ նպատակները հետևյալն են.

- Տաճարների, աղոթատների և Եկեղեցու այլ շենքերի կառուցումն ու պահպանումը:
- Եկեղեցու տեղական համայնքների միջոցառումներին և աշխատանքներին աջակցելը:
- Եկեղեցու ծրագրերին, այդ թվում՝ կրթության և ընտանիքի պատմության հետազոտություններին աջակցելը:

Տասանորդի վճարումը կատարվում է անձամբ և նվիրատվությունների մասին տեղեկատվությունը խիստ գաղտնի է պահվում:

Ծոմապահություն և ծոմի նվիրատվություններ

Տասանորդ վճարելուց բացի, մեզ պատվիրված է մեր միջոցներից տալ՝ աղքատներին ու կարիքավորներին օգնելու համար: Այդ անելու եղանակներից մեկը ծոմ պահելն է՝ առանց ուտելիքի և ջրի մնալ օրվա երկու հաջորդական ուտելու ժամերին: Տերը վերականգնել է ծոմի սկզբունքը Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, և Եկեղեցին յուրաքանչյուր ամսվա մեկ կիրակին սահմանել է որպես ծոմի օր: Ծոմապահությունը, որը միշտ բնորոշ է եղել ճշմարիտ եկեղեցուն, հոգևոր նորացման ու մեր Երկնային Հորն ավելի մոտենալու հնարավորություն է:

Որպես ծոմ պահելու մի մաս, Եկեղեցու անդամները ծոմի առատաձեռն նվիրատվություն են կատարում աղքատներին ու կարիքավորներին օգնելու համար: Այս նվիրատվությունը պետք է առնվազն այն երկու անգամվա ուտելիքի արժեքի չափով լինի, որոնցից եկեղեցու անդամը հրաժարվել է ծոմ պահելիս: Այս ֆոնդերն օգտագործվում են ինչպես տեղի համայնքի, այնպես էլ ամբողջ աշխարհի կարիքավոր մարդկանց համար սնունդ, ապաստան և այլ անհրաժեշտություններ ապահովելու նպատակով:

Ծոմի նվիրատվության համար չկա ստանդարտ գումարի չափ: Առատաձեռնորեն նվիրաբերելով այս ֆոնդերին, մյուսներին օգնելու ձեր ցանկության դիմաց դուք կօրհնվեք և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ օրհնություններով:

Լրացուցիչ ուսումնասիրություն

Հետևյալ հարցերն ու սուրբ գրությունները կօգնեն ձեզ ավելի խորը մտածել այս բրոշյուրում ընդգրկված սկզբունքների մասին: Սուրբ գրությունների տողատակի հուշումներն ու խաչաձև հղումները կուղղեն ձեզ դեպի լրացուցիչ հատվածներ և աղբյուրներ, որոնք վերաբերում են այս սկզբունքներին:

Ինչո՞ւ է կարևոր տասանորդը:

Ղևտացոց ԻԷ.30 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

Ղուկաս ԺԲ.16–21 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Ի՞նչ օրհնություններ ենք ստանում տասանորդ վճարելով:

Մաղաքիա Գ.8–12 (Աստվածաշունչ, Հին Կտակարան; տես նաև 3 Նեփի 24.8–12, Մորմոնի Գիրք, էջ 508)

Մատթեոս Զ.31–33 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան; տես նաև 3 Նեփի 13.31–33, Մորմոնի Գիրք, էջ 487)

«Տասանորդ», *Հավատքին Հավատարիմ* (Միսիոներները կամ եկեղեցու որևէ անդամ կարող են օգնել ձեզ ձեռք բերել այս գրքի օրինակը: Կարող եք գտնել այն նաև Ինտերնետային www.mormon.org կայքում):

Ինչպե՞ս կարող եմ օգնել աղքատներին ու կարիքավորներին:

Եսայիայի ԾԸ.6–7 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

Մատթեոս ԺԹ.21 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Մոսիա 4.26 (Մորմոնի Գիրք, էջ 159)

Ի՞նչ պետք է ես անեմ:

- Շարունակեք կարդալ Մորմոնի Գիրքը:
  Առաջարկվող հատվածներ. _____

  _____

- Սկսեք վճարել լրիվ տասանորդ: Աղոթեք այս պատվիրանը պահելու հարցում օգնություն ստանալու համար:
- Այս կիրակի հաճախեք եկեղեցի:
- Շարունակեք պատրաստվել մկրտությանը:
  Մկրտության ամսաթիվը. _____
- Այցելեք www.mormon.org ինտերնետային կայք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին ավելի շատ բան իմանալու համար:
- Շարունակեք հանդիպել միսիոներների հետ՝ ավելի շատ բան իմանալու այն մասին, թե Աստծո պատվիրաններն ինչպես կարող են օրհնել ձեր կյանքը:

  Հաջորդ հանդիպում. _____

  Միսիոներների անուններն ու հեռախոսի համարը.

  _____

  _____

  _____

  _____

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

www.mormon.org

Նկարները տրամադրել են
Շապկի վրա՝ *Քրիստոսը և հարուստ երիտասարդ կառավարիչը* նկարից, ըստ Հեյնրիխ Հոֆֆմանի, տրամադրվել է C. Harrison Conroy Co., Inc.-ի կողմից
էջ 8, հատված՝ հատված *Ամեն ինչ, որ ուներ* նկարից, ըստ Սայմոն Դյուի: © Simon Dewey
էջեր 5, 6, 11, 13, 14 ըստ Marina Lukach: © Marina Lukach

© 2007 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in the USA.
Անգլերենի հաստատումը՝ 2/06: Թարգմանության հաստատումը՝ 2/06: *Tithing and Fast Offerings-ի* թարգմանությունը: Armenian.

ARMENIAN
4 02011 35201 5
01135 201